

**Տ**տեսական աճի համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով ԼՂՀ-ում սկսվել է տնտեսության հիմնական ճյուղերի վերակառուցում, ինչպես նաև ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ հիմնական կապիտալի նորացման նպատակով: Արդեն շուրջ 10 տարի է, ինչ հանրապետության կառավարության ընդունած նորմատիվային ակտերի հիման վրա խրախուսվում է տեղական հումքի վրա աշխատող գյուղատնտեսական շահութաբեր արտադրությունների արտոնյալ վարկավորումը: Հարկազանձման ոլորտում արմատական բնույթի փոփոխությունները հանգեցրին հարկային քաղաքականության առավել ճկուն համակարգի, որն էլ իր հերթին նպաստավոր պայմաններ ստեղծեց ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար: Այսպես, մասնավոր օտարերկրյա ներդրողների կողմից ԼՂՀ-ում մասնավորեցված ձեռնարկությունների և կազմակերպությունների տնտեսավարման պրակտիկան վկայում է, որ ժամանակակից պայմաններում օտարերկրյա կապիտալն ի վիճակի է հանգեցնել գիտատեխնիկական առաջընթացի վերջին նվաճումների և կառավարչական առաջավոր փորձի ներդրմանն ու լայն տարածմանը հանրապետությունում: Օտարերկրյա ուղղակի և անուղղակի մի շարք ներդրումների շնորհիվ վերականգնվել և այսօր հաջողությամբ գործում են մի շարք օտարերկրյա համատեղ ձեռնարկություններ: Այդ գործընթացին եսպես նպաստեց «Օտարերկրյա ներդրումների մասին», «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» և մի շարք այլ օրենքներ ու ենթաօրենսդրական ակտեր:

Առանձնապես պետք է նշել այն հասգամանքը, որ պետական կառավարման բոլոր մակարդակներում իրականացվում է գործարարությանն ու ձեռներեցությանն աջակցման և օժանդակման քաղաքականություն: Արդյունքում՝ այսօր ԼՂՀ-ում գործում են արտերկրի մի շարք հեղինակավոր ձեռնարկություններ և կազմակերպություններ:

2009թ. հունվար-հունիս ամիսների դրությամբ՝ ԼՂՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հոդվածներն ունեցել են հետևյալ պատկերը.

- ✓ ուղղակի ներդրումները տնտեսության մեջ՝ 699.1 մլն դրամ,
- ✓ պորտֆելային ներդրումների պասիվային մասը՝ 258.7 մլն դրամ,
- ✓ այլ ներդրումների ակտիվային մասը՝ -41893.3 մլն դրամ,
- ✓ այլ ներդրումներից պարտավորությունները՝ 57057.2 մլն դրամ:

Պարզաբանման նպատակով նշենք, որ վճարային հաշվեկշռի հաշվառման գործընթացում «այլ ներդրումներ» ասելով հասկանում են դրամավարկային կարգավորման մարմինների, առևտրային բանկերի և այլ հատվածների կողմից իրականացվող ներդրումները:

Ներկայում շարունակվում է ներդրումների ակտիվ գոր-

ծընթացը, հատկապես գյուղատնտեսության և գյուղատնտեսական մթերքի մշակման, այգեգործության, մասնավորապես՝ խաղողագործության, գինեգործության, մսի, կաթնամթերքի արտադրության, տեղական պտուղ-բանջարեղենի հումքային պաշարների վերամշակման, արեւածաղկի ու եգիպտացորենի յուղի, մակարոնեղենի և հրուշակեղենի արտադրության, ոսկերչության, շինարարական նյութերի, մասնավորապես՝ տեղական քարերի արդյունահանման ու վերամշակման և այլ բնագավառներում<sup>2</sup>: Վերջին 30 տարվա ընթացքում ԼՂՀ-ն առաջին անգամ հնարավորություն ստացավ ինքնուրույն կայացնել արտահանմանն ու ներմուծմանն առնչվող որոշումներ: Այս բնագավառում արտահանման խթանումը պետության կարելուրագույն հիմնախնդիրն է:

1998-ից ի վեր տնտեսական աճ է արձանագրվել ԼՂՀ տնտեսության տարբեր ոլորտներում: Այսպես, 2008թ. տնտեսական աճ է արձանագրվել արդյունաբերության մեջ՝ 13.5%, գյուղատնտեսության մեջ՝ 3.2%, շինարարությունում՝ 2.2 անգամ և տրանսպորտում՝ 27.7%<sup>3</sup>: 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ԼՂՀ-ում ՀՆԱ-ն կազմել է 69.4 մլրդ դրամ՝ 13.6% աճի տեմպով, արդյունաբերությունում աճի տեմպը նույն ժամանակահատվածում կազմել է 21.8%, գյուղատնտեսությունում՝ 4.9%, շինարարությունում՝ 32.2%<sup>4</sup>:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա կարելի է կատարել մի շարք հետետևություններ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումների արդյունքում ներդրումային միջավայրի՝ գործարարության զարգացման, փոքր և միջին ձեռներեցության բարելավման, հարկային քաղաքականության դերի ու նշանակության, հարկային ռազմավարության արդի գերակայությունների և խնդիրների վերաբերյալ.

● ԼՂՀ պետական կառավարման բոլոր մակարդակներում իրականացվում է գործարարությանն ու ձեռներեցությանն աջակցման և օժանդակման քաղաքականություն: Ներկայում շարունակվում է ներդրումների ակտիվ գործընթացը, հատկապես՝ խաղողագործության և տեղական գինեգործության, մսի, կաթնամթերքի արտադրության, գյուղատնտեսական մթերքի վերամշակման, լեռնահանքարդյունահանման, կապի, էներգետիկայի, ոսկերչության և այլ բնագավառներում:

● ԼՂՀ տնտեսական քաղաքականության կարելուր ուղղություններից մեկը մասնավորեցման գործընթացն էր: Ներկայում հանրապետությունում ավարտվել է առևտրի, հասարակական սննդի, կենցաղային սպասարկման և այլ փոքր ու միջին կառույցների մասնավորեցումը: Տնտեսական աճի համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով ԼՂՀ-ում սկսվել է տնտեսության հիմնական ճյուղերի վերակառուցում, ինչպես նաև ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ հիմնական կապիտալի նորացման նպատակով: Գյուղատնտեսության բնագավա-

## ԼՂՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տիգրան  
ՀԱԿՈԲՅԱՆ  
Տնտեսագիտության  
թեկնածու

ռում հաջողությամբ անցկացված բարեփոխումները դարձան ԼՂՀ տնտեսության այլ ճյուղերում նմանատիպ բարեփոխումների իրականացման գրավական: Այսպես, մասնավորեցման գործընթացի զարգացմանը զուգընթաց, հանրապետությունում սկսեց ինտենսիվորեն ձեռավորվել փոքր ձեռներեցության ոլորտը:

● ԼՂՀ տնտեսական համակարգի կայունացման, նորացման եւ զարգացման գործոններն անմիջականորեն կապված են փոքր բիզնեսի բնագավառում ռազմավարական կառավարչական կարելորագույն որոշումների հետ: Հանրապետության տնտեսական զարգացման արդյունքներից մեկը պետք է դառնա փոքր գործարարության գործունը: Լավ զարգացած եւ փոքր ձեռնարկատիրության վրա հիմնված շուկայական ենթակառուցվածքը թույլ կտա հավասարակշռել հակասությունները պետական կառավարման եւ շուկայի ինքնազարգացման միջեւ՝ ճկունության ու բազմազանության աճի հաշվին ապահովելով առավել հարմարվող, կայուն, կանխորոշելի եւ կառավարելի շուկայական միջավայր: Հենց այս գործոններով են պայմանավորված փոքր գործարարության ոլորտի պետական կարգավորման ձգտումը եւ այդ ոլորտի հովանավորչությունը:

● Ներկայում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ, այդուհանդերձ պետք է նշել, որ դեռեւս այս համակարգում առկա են մի շարք թերություններ ու բացթողումներ:

Ինչպես վկայում է տնտեսավարման պրակտիկան, հարկային օրենսդրության ներգործության փաստացի իրականացումը կախված է այդ օրենսդրության պահանջների կատարման եւ ընդհանուր առմամբ՝ հարկային կարգապահության աստիճանից: Իսկ հարկային կարգապահության մակարդակն ուղիղ կախվածության մեջ է օրենսդրության խախտումների համար նախատեսված պատժամիջոցներից, տույժերից ու տուգանքներից, իրականացվող վերահսկողության արդյունավետության եւ օրենսդրության պարզության աստիճանից: Այսպիսով, հարկային օրենսդրության պարզեցման ռազմավարությունը, ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն հարկային կարգապահության աստիճանի բարձրացմանը նպաստելու միջոցով, անմիջականորեն անդրադառնում է տնտեսական գործընթացների կառավարման եւ վերահսկողության արդյունավետության, ինչպես նաեւ ներդրումների ծավալների վրա:

● Ռեսուրսների օգտագործման սահմանափակության եւ առաջնային պահանջումների ոչ լրիվ բավարարման պայմաններում անցումային շրջանում գտնվող պետության բարեփոխումների իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է օտարերկրյա ներդրումներից, արտաքին տնտեսական կապերի զարգացման մակարդակից: Ուստի՝ ԼՂՀ հարկային համակարգը պետք է կարգավորի ներպետական տնտեսական այն պայմանները, որոնք օժանդակում են օտարերկրյա կապիտալի հոսքին՝ արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ արտադրական ձեռնարկությունների համար տարբեր հարկատեսակների գծով արտոնությունների սահմանման (կախված ամբողջ կապիտալի նկատմամբ օտարերկրյա կապիտալի կշիռից) եւ այլ գործիքների միջոցով: Միաժամանակ հարկ է նշել, որ անցումային ժամանակաշրջան ապրող ԼՂՀ հարկային համակարգը նպատակահարմար չէ ծանրաբեռնել արտոնությունների բազմաթիվ տեսակներով, որը կարող է ոչ այնքան նպաստավոր, որքան խառնաշփոթ հարուցող գործոն դառնալ: Ուստի՝ ԼՂՀ առաջնային քայլերից մեկը պետք է լինի օտարերկրյա կապիտալի գործունեության օրենսդրա-իրավական կատարյալ բազայի ստեղծումը:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը ԼՂՀ-ում մեծապես պայմանավորված է տարածաշրջանում եւ երկրի ներսում խաղաղության ու կայունության ապահովման հեռանկարով: Սակայն այս հարցում պակաս կարելու նշանակություն չունի նաեւ երկրի օրենսդրական դաշտի, ներդրումային համապատասխան ենթակառուցվածքի դե-

րը: Ներդրումային ենթակառուցվածքի ձեռավորման եւ գործունեության ներկա վիճակը դեռեւս չի կարելի բավարար համարել:

ԼՂՀ գործարարության զարգացման ոլորտում առաջստ առկա են մի շարք բացահայտ թերություններ: Արտադրական միջոցների վերականգնման, արտադրության եւ ծառայությունների վերազինման, գործարարության ոլորտի ըստ ամենայնի խթանման եւ նոր ձեռնարկություններ ստեղծելու խնդիրն առավել էս բարդանում է ինչպես հանրապետությունում, այնպես էլ տարածաշրջանում տիրող բարոյաինքնաբանական, հատկապես՝ քաղաքական մթնոլորտով, պատերազմական ձգձգվող իրավիճակով, որն ինչ-որ տեղ արտահայտվում է ձեռնարկատիրական նոր նախաձեռնումների նկատմամբ հասարակական ոգեւորության ու եռանդի թերզարգացմամբ եւ նույնիսկ բացակայությամբ: Սույն հիմնախնդիրը, անբարենպաստ այլ գործոնների ազդեցությունից բացի, խորանում է նաեւ օրենսդրական դաշտի անկատարության, եղած օրենքներում եւ դրանց կիրարկման մեխանիզմներում հանդիպող թերությունների պատճառով:

Ներդրումների նկատմամբ վարվող քաղաքականության օրենսդրորեն ամրագրման, ներդրումային միջավայրի բարելավման եւ ներդրումների խթանման նպատակով պետք է իրականացվեն կազմակերպական բնույթի մի շարք միջոցառումներ, որոնցից են.

● Պետք է ընդունվի ներդրումների մասին նոր օրենք՝ օրենսդրորեն ամրագրելով տեղական եւ օտարերկրյա ներդրողների համար օրենսդրական բարենպաստ դաշտի առկայությունը,

● Երկրի տնտեսության տարածքային անհավասարակշիռ զարգացումից խուսափելու համար հարկավոր է իրականացնել համալիր միջոցառումներ՝ երկրի շրջաններում ներդրումների խրախուսման նպատակով:

● Շուշի քաղաքի վերականգնման եւ ներդրումների ներգրավման նպատակով անհրաժեշտ է վարել առանձին տնտեսական քաղաքականություն՝ ստեղծելով հատուկ տնտեսական գոտի:

● Հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ժամանակակից միտումները՝ գիտատար ճյուղերում ներդրումների կշռի առաջընթաց մեծացումը, անհրաժեշտ է եապես փոփոխել երկրի մրցակցային առավելությունների կառուցվածքը, որում աստիճանաբար պետք է նվազեն բնական ռեսուրսների, Էժան աշխատուժի առկայության դերը, միաժամանակ որոշիչ դառնան «ստեղծված ակտիվները», ինչպես բարձրորակ մասնագետները, ենթակառուցվածքի զարգացածությունը,

● Անհրաժեշտ է ակտիվացնել եւ ավելի ուղղորդված դարձնել Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի հետ համագործակցությունը՝ ձեռավորելով երկուստեք վստահելի ու փոխշահավետ միջավայր:

● Պետք է ամրագրել պետության վերաբերմունքը ներդրումների համար գերակա համարվող ոլորտների զարգացմանը եւ այնտեղ կատարված ներդրումներին:

● Պետք է ընդլայնել արտասահմանյան երկրների միջեւ գործարար եւ ֆինանսական տեղեկատվության մատչելիությունն ու փոխանակումը:

Ներդրումային քաղաքականության նպատակների իրականացումը ենթադրում է ոլորտի հիմնարար խնդիրների լուծում, առանց որի հնարավոր չէ իրականացնել ներդրումային արդյունավետ քաղաքականություն, ապահովել ներդրումների ծավալների աճ եւ երկրի տնտեսության կայուն զարգացում:

1. ԼՂՀ ԱԿԾ, ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2009թ. հունվար-սեպտեմբեր, Տեղեկատվական եռամսյակային զեկույց, Ստեփանակերտ 2009, էջ 70  
2. <http://www.aif.am/?language=armenian&change=news&id=13>  
3. <http://www.mineconomy.nk.am/uploads/files/02naxhashvetv.pdf>  
4. ԼՂՀ ԱԿԾ, ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2009 հունվար-սեպտեմբեր, էջ 6